

ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԵՎ ՎԱՂ
ԱՇԽԱՐՀԱԲԱՐՑԱՆ ՏԱՐԻԵՐԸ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ
«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Առաքել Դավրիժեցին 17-րդ դարի հայ պատմագրության ամենանշա-
նավոր դեմքերից է: Թեև քաղաքական առումով 17-րդ դարը բավականին
խառնակ ժամանակաշրջան էր Հայաստանում, այնուամենայնիվ, հանձին
Առաքել Դավրիժեցու՝ հայ պատմագրությունը առաջընթաց ապրեց:

Դավրիժեցին գրել է 60 տարվա պատմություն՝ 1602-ից մինչև 1662-ը:
Պատմիչի համար աղբյուր են հանդիսացել ականատես մարդկանց վկայու-
թյունները, ինչպես նաև գրավոր հիշատակարանները. «Եւ զայս գործ, որ
զազգն Հայոց քշեաց և տարաւ, ոչ՝ թէ մի անգամ կամ երկիցս և երկիցս արար և
եկաց, այլ գտի հաւաստեաւ բազում արս՝ որք ինքեանք իսկ քշածք էին, յորոց
հարցեալ տեղեկացայ, նա և ի յիշատակարանաց գրոց՝ գորս ընթերցայ»¹:

«Պատմության» զգալի մասը վերաբերում է Շահ-Աբասի արշավանքներին
դեպի Հայաստան, ինչպես գրում է հեղինակը «Նախադրութիւն առաջիկայ
գրոցս պատմութեան» հատվածում. «Պատմութիւն անցից հարուածոց, որք
եկին ի վերայ աշխարհիս Հայոց ի յետին ժամանակիս ի թագաւորէն Շահաբաս
կոչեցելոյ և ի նորին ազգէն որք են Պարսիկք: Նաև յաղագս անշքանալոյ սրբոյ
աթոռոյն Էջմիածնի և նորին կաթողիկոսացն: Այլ և վասն աղաւաղելոյ կարգաց
և կրօնից քրիստոնէութեան: Ընդ սոցին և այլ ևս բանք պատմութեան դիպու-
ածոց քաղաքաց և գաւառաց, որք պատահեցան ի թագաւորաց և յիշխանաց և
ի կաթողիկոսաց և յայլոց, զտցես աստ բաժանեալ ի գլուխս գլուխս ըստ
բերման ժամանակին»: Պատմիչը ականատեսի ճշգրտությամբ, լալահառաչ
տողերով նկարագրում է «մեծ գաղթի» ցնցող տեսարանները: Դավրիժեցին
անդրադառնում է նաև ջալալիների շարժմանը, ժողովրդի սոցիալական ծանր
վիճակին, վերածննդի ժամանակաշրջանին՝ նկարագրելով, թե ինչպես են
կառուցվում նոր վանքեր, դպրոցներ, շինություններ, թե ինչպես լուսավոր-
չական գործունեությամբ հանդես են գալիս Սեմեոն Ջուղայեցին, Ստեփան
Լեհացին, նկարչության ասպարեզում՝ մեծատաղանդ նկարիչ Մինասը:

¹ Տե՛ս «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավրիժեցոյ» Վաղարշապատ 1896թ. էջ 148:
(Այսուհետ՝ հիշյալ հրատարակությունից մեջբերումների էջերը կնշենք տողի վրայ):

17-րդ դարում գրաբարը վաղուց արդեն խոսակցական լեզու չէր, և քանի որ Հայաստանը պետականությունից զրկված էր, չուներ նաև պետական լեզվի գործառույթ, ուստի հին հայերենը պարփակվել էր եկեղեցական և մատենագրության շրջանակներում, սակայն կղզիացած մնալ այլևս չէր կարող, և այս ժամանակաշրջանի մատենագրական գրեթե բոլոր երկերը դասական գրաբարին բնորոշ ձևերի հետ մեկտեղ պարունակում էին միջինհայերենյան և անգամ վաղ աշխարհաբարյան կազմություններ՝ ինչպես բառապաշարում, այսպես էլ հնչյունաբանության, ձևաբանության և անգամ շարահյուսության մեջ: Մեր քննության նյութը քաղված է 1896թ.-ին Վաղարշապատում հրատարակված Առ. Դավրիժեցու «Պատմություն»-ից, որը համարվում է լավագույն քննական հրատարակություններից մեկը: Դավրիժեցու «Պատմության» լեզվական հիմքը, իհարկե, գրաբարն է, սակայն երկը արտացոլում է նաև ժողովրդի լեզվի խոսակցական շերտը:

Պատմիչի ստեղծագործության մեջ հաճախակի հանդիպում են միջին-հայերենյան, բարբառային, վաղ աշխարհաբարյան բառեր և քերականական ձևեր, բազմաթիվ են նոր փոխառությունները՝ հատկապես պարսկերենից և արաբերենից: Այս երևույթը ցայտուն դրսևորվում է հատկապես բայական համակարգում: Անդրադառնա՞նք նախ՝ դերբայներին: Հայտնի է, որ դասական գրաբարում ի խոնարհման բայերի անորոշ դերբայը և խոնարհման համաբանությամբ ուներ ել վերջավորություն: Դավրիժեցու «Պատմության» մեջ ի խոնարհման բայերը, անկախ բայասեռից (կրավորական թե ներգործական), իրենց անորոշ դերբայը կազմում են իլ վերջավորությամբ, այսինքն ի խոնարհման բայերը միայն կրավորական սեռի իմաստ չեն արտահայտում, այլ ընդհանուր կամ հասարակ սեռի բայեր են: Բայի ուղիղ ձևում հստակ տարբերակվում են ե և ի խոնարհումները: Օր՝ «Եվ ճրագունքն ամենայն սկսան նուազիլ» (էջ 82): «Եվ որքան դեպ ի ներքս երթայր լայներ և շուրջանակի բարձր փուլ, յորմէ ոչ կարէին ելանել և փախչիլ» (էջ 95): «Եւ այնու ոչ կարացաք զերծանիլ զպարտոս» (էջ 174): «Եվ ջանիւք և երկօք կրթէր զանձն ըստ հրամանի գրոցն կենցաղավարիլ» (էջ 251):

Ապա՝ Դավրիժեցու «Պատմության» մեջ հանդիպում են հարակատար դերբայի կիրառության օրինակներ ստորոգյալի պաշտոնում՝ (թվով 3) վերլուծական ժամանակների՝ հարակատար ներկա և հարակատար անցյալ կազմում՝ մի երևույթ, որը միջին հայերենում օրինաչափություն էր: Հարակատար դերբայը ծագել է ուած գրաբարյան բայածանցից, որը բայանուններ էր

կազմում²: Իսկ 15-րդ դարից սկսած՝ այն վերածվում է դերբայակերտ ածանցի, ու/վ մասնիկն էլ համապատասխանաբար դառնում է կրավորականի ցուցիչը: Բերենք բաղադրյալ ստորոգյալի կազմում կիրառված հարակատար դերբայի օրինակներ. «Տասն և հինգ աւուր օրհնած էր» (էջ 367), «Կանոնած է ի մեր Դայրապետացն» (էջ 367), «Որք ինքեանք իսկ քշածք էին» (էջ 148):

Փաստենք, որ Դավրիժեցին հարակատար դերբայը իբրև որոշիչ չի գործածում, բնականաբար և չի հոլովում, միայն օրինակներից մեկում այն օգտագործում է հոգնակի թվով՝ քշածք էին՝ համաձայնեցնելով հոգնակի ենթակայի հետ: Ի տարբերություն Դավրիժեցու գրչին պատկանող հատվածների՝ «Պատմության» մեջ ներառված «Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց» գլխում հարակատար դերբայով արտահայտված որոշիչներ, ինչպես նաև գոյականաբար կիրառված օրինակներ կան, ինչը նշանակում է, որ 17-րդ դարում հարակատար դերբայը լայն կիրառություն ուներ: Բերենք օրինակներ նշված հատվածից. չնայած դրանք Դավրիժեցու գրչին չեն պատկանում, բայց դարաշրջանի լեզվի ցայտուն արտահայտություններ են. «Եվ մնայ կտրած ալմաստն» (էջ 589), «Հարեն կռանով ի բլած թղթին վերայ» (էջ 589): Դասական գրաբարում ապառնի ժամանակը արտահայտվում էր գլխավորապես I և II ստորադասական ապառնիների միջոցով, ապառնի դերբայ + եմ բաղադրյալ ժամանակաձևը այնքան էլ տարածված չէր, սակայն միջինհայերենյան ու վաղ աշխարհաբարյան շրջաններում արդեն ապառնի դերբայ + եմ բաղադրյալ ժամանակաձևը, զուգահեռաբար անցյալ դերբայ + եմ կամ լինիմ ձևերը չափազանց գործածական են դառնում. «Վարծս բարեաց ընդունելոց եմք» (էջ 273), «Ի հին ժամանակաց անապատ եղեալ է» (էջ 252), «Աւերեալ էր բնաւին ոչ միայն մատուռն» (էջ 326):

Բացի զուտ գրաբարյան ոց-ով վերջավորվող ապառնի դերբայից՝ Դավրիժեցին իր «Պատմության» մեջ օգտագործում է նաև զուտ աշխարհաբարյան ապառնի դերբայի ձև եմ օժանդակ բայի հետ, ինչը նշանակում է, որ 17-րդ դարում ու ով վերջավորվող ապառնին արդեն հաղթում էր գրաբարատիպ ապառնի դերբային: Բացի այդ՝ ոյ > ու հնչյունափոխությունն անորոշ դերբայի սեռական հոլովի պարագայում կայացած փաստ էր՝ տալոյ եմ > տալու եմ. «Ես Սովսես վարդապետս տալու եմ Մելիքսեթ կաթողիկոսին զհարիւր թուման» (էջ 297): Այսպիսով՝ 17-րդ դարում ապակատար դերբայը՝ ելու, ալու վերջավորությամբ, արդեն ձևավորված էր:

² Տես Ս. Ղազարյան «Հայոց լեզվի համառոտ պատմություն» Եր., 1981, էջ 265-266:

Անցնենք անցյալ դերբային և նրա զարգացումներին, որոնք ցայտուն արտահայտվել են Առ. Ղավրիժեցու լեզվում: Գրաբարի անցյալ դերբայի բոլոր կիրառություններն էլ լավագույնս դրսևորված են նրա «Պատմության» մեջ՝ ինչպես գոյականական, այնպես էլ բայական: Պատմագրի ստեղծագործության մեջ խիստ հաճախադեպ են անցյալ դերբայ + եմ և լինիմ բաղադրյալ ժամանակաները, սակայն հեղինակը օգտագործում է նաև վաղակատար դերբայի ել-ով և - եր-ով երկու նոր ձևեր: Այսինքն 17-րդ դարում առկա էր հայերենի երկու բարբառախմբերին բնորոշ եալ դերբայական վերջավորության հնչյունափոխությունը՝ եալ > ել երկբարբառի պարզեցմամբ ում ճյուղի բարբառներում, եալ > ել > լ > ր = եր՝ կը ճյուղի բարբառներում:

Ստորև բերում ենք Ղավրիժեցու պատմագրության մեջ գործածված վաղակատար ներկա, վաղակատար անցյալի օրինակներ. «Իշխանն մեր թուրք է ուղարկել մեզ թէ, այդ վարդապետ, որ ի թուրքի աշխարհէն եկեր է, չաշուտ է եղեր» (էջ 378), «Ի Թուրքած աշխարհէն չաշուտ է եկեր» (էջ 378), «Լեհայ երկիրն մէկ մարդոյ խաշանց մէջ մահ անկեր է. նա Աստուծոյ քուֆր է արեր» (էջ 641), «Տաճիկ մի խոզ է եղեր» (էջ 641): Այս օրինակները հերոսների ուղղակի խոսքեր են, այսինքն պատմիչը գեղարվեստական ոճավորում է կատարում: «Լուսաւորչի Աջն կորեր էր» (էջ 419). այս նախադասությունը ոճական տեսանկյունից բնութագրելով՝ կարող ենք նշել, որ գրաբար Ավետարանի վերապատմում է, այսինքն՝ Առ. Ղավրիժեցին նպատակ է հետապնդում հասկանալի դարձնել ավետարանական ճշմարտությունները: Օր. «Կէս աւուրն անցեր էր» (էջ 646), «Այլ հմայողք հմայելով սասցել են» (էջ 650), «Որ քառասունք էր պահեր» (էջ 367): Օրինակներն արդեն պատմիչի ոճի հեղինակային դրսևորումներն են:

Այսպիսով՝ եր-ով ձևերը ակնհայտորեն իրենց կիրառությամբ գերիշխում են՝ ի տարբերություն ել-ի, թեև, ըստ տրամաբանության, պետք է լիներ հակառակը, որովհետև Առ. Ղավրիժեցին արեւլահայերենի կրողներից է: Ղավրիժեցու երկում բայի սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաների կիրառություններում ևս կան գրաբարյան կանոններից շեղումներ, որոնցից ամենաբնորոշը միջինհայերենյան կու, կը մասնիկով անկատար ներկայի, անցյալ անկատարի ձևերն են: Կու մասնիկի ծագման վերաբերյալ հայագիտության մեջ կան մի շարք կարծիքներ, սակայն ավելի գիտական, համոզիչ են Արսեն Այտընյանի և Մանուկ Աբեղյանի բացատրությունները /Մ. Աբեղյան «Չայոց լեզվի տեսություն» Եր. 1965 թ էջ 316-317/:

Ըստ Արսեն Այտընյանի՝ կու մասնիկը կայ ու բառերի բաղադրություն է, որ ամփոփմամբ դարձել է կու, կ ու նայի - փոխանակ՝ կայ ու նայի: Այնուհետև ընդհանրացել է բոլոր դեմքերի համար՝ կու լսնք փոխա-

մակ՝ կանք ու լսենք, կու տեսաներ - փոխանակ՝ կայր ու տեսաներ: Հեղա-
գայում կու-ն հնչյունափոխվելով՝ տվել է կը, կի, կ: Սրան համամիտ է
Աճառյանը:

Ըստ Մ. Աբեղյանի՝ կու-ն առաջացել է կոյ մասնիկից (ոյ > ու
հնչյունափոխությամբ), որը անկախ բառ էր, ահա նշանակությամբ մակբայ:
Այն այսօր էլ կա բարբառներում — կո, կոյ, գո,գյո — ձևերով: Ստորև բերում ենք
օրինակներ. «Այլ ասաց. խօսքն մէկ կուլիմի» (էջ 367), «Որք վեց ջաղաց
կուբանեցնէին» (էջ 492), «Կայր որ փաշայն կուգայր,կայր որ փաշի վաքիլն
կուգայր, նոքա որ կուգային, գիտէին որ բանի յետին փուշ էր, նոքա այլ կու
սկսանէին ի կողոպտել և ի թալանել զքաղաքն» (էջ 569):

«Թանկագին քարերի անունների և հատկությունների մասին» գլխում,
որն ինչպես նշել ենք հեղինակի գրչի արգասիքը չէ, արդեն կու-ով, կ- ով ձևերը
գերիշխող են, ինչը վկայում է, որ 17-րդ դարի խոսակցական լեզվում սահմա-
նական ներկա և անցյալ անկատարը կազմվում են գլխավորապես կու եղանա-
կիչով: Այս հատվածում կան մաև պիտի եղանակիչով ձևեր՝ միջին հայերենում
ծնավորված հարկադրական եղանակի իմաստով: Դավրիժեցին, սակայն, իր
«Պատմության» մեջ այս եղանակիչը չի օգտագործում: Բերենք օրինակներ.
«Թրաշ եղածն՝ չորս դիրաթն տասն հազար օթմանի ծախել կու պիտի» (էջ 597),
«Շամամին իմանամք Ժ. մսղալ Ե. ֆլօրի առնուլ կու պիտի» (էջ 604):

Դավրիժեցին հետևողական է անցյալ կատարյալ ժամանակաձևի
կազմության գրաբարյան կանոնները պահպանելու հարցում: Թեև երբեմն
տուրք տալով միջին հայերենում ծնավորվող օրինաչափություններին՝ մա
գործածում է անցյալ կատարյալի գրաբարյան կանոններից շեղվող ձևեր,
որոնց քննությունը ի հայտ է բերում ժամանակի իշխող միտումը՝ կանոնավորել
և միասնականացնել գրաբարի անցյալ կատարյալի հիմքերը: Այսպես՝ Դավ-
րիժեցին օգտագործում է հանեցին ձևը. «Զորս կիսամահ հանեցին»(էջ 631):

Այս բայը դասական գրաբարում անկանոն էր, պարզ արմատական հիմք ուներ՝
հան, և նրա դասական ձևը կլիներ հանին: Գալ բայը անկանոն բայ էր, նրա
եզակի թիվ III դեմքն է եկն, սակայն Դավրիժեցու մոտ այս ձևին զուգահեռ
հանդիպում ենք եկաւ, ինչպես մաև եկաց միջինհայերենյան ձևերին, որոնք
դարձյալ փորձ են՝ կանոնավորելու այս անկանոն բայի խոնարհումը: Բերենք
օրինակներ. «Դարիշուքուրն է. լաք մարդով եկաւ....» (էջ 646), «Յետ սորա
եկաց կաթուղիկոս սուրբ էշմիածնի տէր Դաւիթ» (էջ 6): Սպանանել բայը
Դավրիժեցին խոնարհում է սպանեաց ձևով: Միջին հայերենում այս բայը
կորցնելով ան տոկածանցը՝ վերածվել է սպանել ձևի, որը III դեմքում պետք է
լիներ սպան, ոչ թե սպանեաց: Օր՝«Ձերկուսն ի դուրս սպանեաց» (էջ 640),

ուռչել բայի անցյալ կատարյալի հիմքը ի թույլ բաղադրիչով պետք է լիներ, սակայն Դավրիժեցու օրինակներից մեկում հանդիպում ենք ուռան ձևին, որը ցույց է տալիս ուռչելու փոխարեն ուռիլ բայի երևան գալը. «Ուռան երկոքին ուռքն նորա» (էջ 247): Ինչ վերաբերում է բայի ժխտական խոնարհումներին, Առ. Դավրիժեցու «Պատմության» մեջ բայական համակարգում ժխտական խոնարհման մասին խոսելիս պետք է նշել, որ հեղինակը հիմնականում հավատարիմ է գրաբարյան կանոններին, թեև ունի մա չ, չի, չէ մասնիկների սակավադեպ կիրառություններ: Օր. չելան՝ անցյալ կատարյալը չ-ով. «Որ գլուխ չելան թաղելով» (էջ 635): Չի գայ՝ ըղծական եղանակի չի-ով ժխտականը. «Վնաս արար Ուրիայ քաղաքին ի պատմել չի գայ» (էջ 569): Այսպիսի կազմություններով դարձյալ հարուստ է քարերի հատվածը, որը իր ժամանակի խոսակցական լեզվի ինքնատիպ նմուշ է: Օրինակ. «Յայնտեղն ով որ ի հետ չի պահէ նորա էտիպար չեն էներ» (էջ 605), «Գլուխն չժածի սրտի ուժ տայ» (էջ 605), «Այն խոտեն ի գատ այլ խոտ չի ուտէր» (էջ 602):

Դավրիժեցու «Պատմության» ոճին բնորոշ է ևս մեկ յուրահատկություն՝ իւր կրավորակերտ մասնիկի միջոցով անցյալ անկատար եզակի թիվ III դեմքի կազմությունը: Այս մասնիկով անցյալ անկատարի կրավորական սեռի կազմության կաղապարը, իհարկե, գրաբարյան է, սակայն դասական գրաբարում այն սակավ կիրառություն ուներ: Դավրիժեցու երկում կան իւր-ով կրավորականի կազմության մեծաթիվ օրինակներ. «Մնացեալ անօթսն սրբոյ էջմիածնի, որ ինչ գտանիւր» (էջ 227), «Եւ չքնաղ գիտութիւնս ընդ իս ի հող մտեալ ամփոփիւր» (էջ 400), «Եւ միտք բանին ընդ մինն այլայլիւր» (էջ 406):

Ըստ ամենայնի 17-րդ դարում ներգործական ու կրավորական սեռերի միջև հիմնական տարբերակում կատարելու միտում կար, որի արդյունքում մեծ տարածում է ստանում իւր-ով անցյալ անկատարի կրավորականը կազմելու կաղապարը: Ինչ վերաբերում է զուտ աշխարհաբարյա վ, ու, ւ կրավորակերտ ածանցին, ապա այն ևս առկա է Դավրիժեցու «Պատմության» մեջ, սակայն ընդամենը երկու անգամ. «Առուաւ սուլթան Աիմատն որդուվք և դստերօք իւրովք և փախստական եղեն զօրք նորա» (էջ 582), «Եւ կոխվեցաւ Ջալօղլին և փախեալ» (էջ 635): Ինչպես նկատում ենք, այս երկու բայերն էլ ներգործական սեռի լինելով՝ խոնարհվել են կրավորակերպ վերջավորություններով, բայց քանի որ կրավորակերպ խոնարհման վերջավորությունները այլևս կորցրել էին իրենց սեռային իմաստատարերակիչ դերը, ամիրաժեշտություն էր առաջացել մի նոր քերականական մասնիկի, որն էլ դարձավ ու / վ: Այս ածանցը ծագում է գրաբարյան ուած բայանվանակերտ ածանցից՝ դիպուած, հարուած:

Այժմ անդրադառնանք նաև Առ. Ղավրիժեցու «Պատմության» գրչագիր (Աթանաս Ղաիր, 1714) և տպագիր (Վաղարշապատ, 1884) օրինակների այն տարբերություններին, որոնք վերաբերում են մեր նյութին (տես էջ 695-711):

Գրչագիր տարբերակում առկա են տալ բայի աշխարհաբարյան անցյալ կատարյալի ձևերից՝ տվեր, տվին, որոնք տպագիր հրատարակության մեջ խմբագրվել են ետուր, ետուն՝ գրաբարյան ձևերով: Առնել (կատարել, գործել) բայը միջին հայերենում արդեն կորցրել էր իր *ա-ն-* վերածվելով անել-ի, և Ղավրիժեցու «Պատմության» գրչագիր օրինակում հանդիպում է անէին ձևը, ինչպես նաև անել անորոշ դերբայը, որոնք տպագիր հրատարակության մեջ վերածվել են գրաբարյան առնէին և առնել տարբերակների: Գրչագիր տարբերակում առկա են նաև երկբարբառի պարզեցման դեպքեր, ինչպես՝ բռնեց և սպանեց, որ տպագիր հրատարակության մեջ դարձել է ըմբռնեաց և սպան, ինչպես նաև գրչագրի չէ տեսել-ը դարձել է չէ տեսեալ:

Անցյալ կատարյալի եզակի թիվ III դեմքի է/են ածականի կիրառության ուշագրավ օրինաչափություն կա Առ. Ղավրիժեցու «Պատմության» գրչագիր օրինակում. ամենուրեք օգտագործվել է է ծականը՝ անկախ բայի ծայնավորով թե բաղաձայնով սկսվելուց՝ էիաս, որը հրատարակիչները խմբագրել են ըստ գրաբարյան կանոնի, իհարկե, համապատասխան մշուհը կատարելով ժանոթագրություններում: Իսկ օրինակ ուղարկել է ձևը գրչագրի մոտ եղել է ուղարկեր է, որը հրատարակիչները վերափոխել են ուղարկել ձևով: Գրչագիր օրինակում նկատելի են նաև դեռևս միջին հայերենում օրինաչափություն դարձած ան, են սոսկածանցների հնչյունափոխության հետքեր, որոնք հրատարակիչները դարձել են գրաբարատիպ՝ հասին - դարձել է - հասանին, սպանել-ը՝ սպանանել, գիտենալ-ը՝ գիտել, ելանին -ը՝ ելնան: Արձանագրեմք, որ նման կերպ հրատարակիչները բնագիրը ցանկացել են զերծ պահել ոչ գրաբարյան լեզվական տարրերից: Փաստենք, որ Առ. Ղավրիժեցու «Պատմության» մեջ առկա են. 1. կու և պիտի եղանակիչներով ձևեր՝ գրաբարյան ներկայի, ըղծականի և հարկադրականի իմաստներով: 2. Հանդիպում են մոր դերբայներ, ինչպես հարակատարը, վաղակատարը՝ ած, ել, եր վերջավորություններով, աշխարհաբարյան ապակատարը՝ ու վերջավորությամբ: Այս դերբայներով կազմվում են բաղադրյալ ժամանակներ: Վաղակատար դերբայի կազմության հարցում Ղավրիժեցին ակնհայտ գերապատվություն է տալիս եր-ով ձևերին: 3. Ղավրիժեցու «Պատմության» մեջ հանդիպում է կրավորականի կազմության մոր եղանակը՝ վ ածանցով: 4. Ժխտական խոնարհման ժամանակ պատմագիրը օգտագործում է չ, չի, չէ մասնիկները: 5. «Պատմության» մեջ կան անցյալ կատարյալի հիմքերի կանոնավորման օրինակներ: